

Պ Ա Տ Մ Ա Կ Ա Ն

Ս Տ Ո Ր Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ի Ն
Ե Կ Ե Ղ Ե Ց Ե Ա Ց Ի Ն Ը Յ Ո Տ Ն Ա Ր Ը Գ Ա Մ Ո Ւ :

Տ Ե Ղ Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ի Ն

Կ Ա Ռ Ո Ւ Ղ Ի Կ Ե Ե Կ Ե Ղ Ե Ց Ի Ո Ց Ն Թ Ա Լ Ն Ա Ց :

Մեծ եկեղեցին Թաշնայ Կաթուղիկէ անուանեալ յարձանագրութիւնս իւր, այսպէս ունի զներկայ գրութիւն իւր :

Կառուցեալ է ՚ի Հիւսիսոյ գեղջն ՚ի տափարակ վայրի ՚ի կարկասս քարանց՝ կարի մեծադիր և խաչաձև. համակ սրբատաշ քարամբ և քանդակագործութեամբ ՚ի գլուխս լուսամտաց և ՚ի շրջապատս տանեաց. յարեկից ՚ի վերայ սեղանոյն ունի զերիս լուսամուտս ՚ի կիսարդարակի անդ. որ է արեկեան թև խաչաձև տաճարին, և երկոտասան քայլ լայնութեամբ. որ արտաբուստ երևի բրդաձև. այսու նմանութեամբ են կողմնական թևք եկեղեցոյն բաց ՚ի բոլորակ երկուց լուսամտաց, զորս արեկեանն միայն ունի ՚ի վերոյ քան զկամար սեղանոյն, և նորին՝ զմի մի և եթ :

Կաթուղիկէ սեանց կառուցեալ է ՚ի վերայ չորիցն ունելով զերկոտասան լուսամուտս, այժմ անկեալ, բաց ՚ի կողմանէ արեկեան Հիւսիսոյ, յորում են երեք լուսամուտք խախուտ և քայքայեալք. ունի զերկուս խորանս երկուստեք սեղանոյն, և զՀինգ դրունս, զերկուս յառաջին դասու և զերկուս ՚ի յետնումն ՚ի Հիւսիսոյ և ՚ի հարաւոյ. և զմի՝ յարեմտից խոնարհ քան զնոսա, ՚ի վերայ այսր դրան են չորք մեծ լուսամուտք, յորոց ՚ի գլուխս հինգ բողբոջք ընդ կամարան ՚ի ներքուստ՝ այսու ձևով 0 0 0 0 0 իսկ ՚ի դասու կանանց կամ յերրորդ բաժնի եկեղեցոյն՝ չորք չորք լուսամուտք յերկուսին կողմանս, և յարեմտեան որմն՝ մի մի մեծադիր յաջ և յահեակ դրանն, ունելով ՚ի գլուխս՝ զմի մի ևս բողբոջս. ընդ այսոցիկ ունի և զերկու լուսամուտս յարեկից :

Հարաւայինն հանդերձ արեմտեան որմով անկեալ է ՚ի հիւսանց մինչև ցլուխ արեմտեան դրանն ՚ի 1840 ամի ՚ի մեծի շարժին :

Չորեքին կամարքն սեանց, յորոց վերայ բողբոջք ընդարձակութիւն գմբեթին, են հաւասար թարձրութեամբ. իսկ կամարքն կողմնականք որք իջանն ՚ի սեանց անտի գէս յորմունս, ՚ի թևս եկեղեցոյն՝ են խոնարհ քան զայնս իրրու զգայիանեայ վանացն ՚ի Աղարշապատ :

Գտան ինչ ինչ արձանագրութիւնք ՚ի վերայ սեանցն, յորոց սիւնն առաջնոյ դասուն ՚ի հարաւոյ՝ զիր ունելով յիշատակի, ունէր և թուական ըստ այսմ :

"ՄԼԲ. Թուականութեան". և մնացեալքն անվերձանելիք. (տես յ՝ հատորի Հ. Շահխաթունեան. եր. 51) :

Մ Ա Ս Ս Ա Ր Ա Ց

Մաստարայ * զիւղ է ՚ի սպառուածս արեմտեան բաղկաց Արագած լեռին, ՚ի ծոցամիջի բլրոցն բարձանց աղխաղխելոց յարեմտից և ՚ի Հիւսիսոյ գեղջն. որոց ստորոտք աւարտին ՚ի տափարակ գաշտավայրն երկայնեալ մինչ ցափն Ախուրեան գետոյ ՚ի հարաւային ծայր Շիրակայ գաւառին : ըստ որոյ այս զիւղ Մաստարայ յաւէտ անկանի ՚ի հարաւային մասին Շիրակայ, քան յԱրագածոտն. քանզի գրեթէ վերջացեալ իսկ է յարեկից նորա՝ սան Արագածու, ուստի սկսեալ են աղխաղխ բլրոցն իրբև գօտիք, որպէս ասացաւ, մեծի լեռինն, որով և առաւել է մերձ յԱխուրեան, քան յԵրասխ : Իսկ գաշտավայրն տարածեալ յարեմտից գեղջն յԱխուրեան՝ է արտատեղի Մաստարայ գեղջ :

(*) Մաստարայ անունս, նշանակէ Մասն որոշայ. զի որպէս անանդուծեամբ հասեալ է առ մեզ, սուրբն Գրիգոր Լուսաւորիչ ի բերին ընդ իւր ՚ի կեսարիայ զմասունս Ս. Յովնանու, մասն մի ամփոփեալ է անդէն, յորոյ վերայ կառուցեալ է եկեղեցին յանուն սրբոյն Յովնանու. և զիւղն կոչեցիալ Մաստարայ :

Եկեղեցի սորա կառուցեալ է ՚ի միջավայրի գեղջն, անուամբ սրբոյն Յովհաննու Արապետի, բոլորակ խաչաձև. ունի գմբէթ ընդարձակ հաստատեալ ՚ի վերայ կամարացն թևոց, զի չունի զսին. և ՚ի նմա ութն լուսամուտք, չորեքին թև եկեղեցւոյս արտաքուստ են բրգաձև, և ունին զմի մի լուսամուտս, ինկ շրջապատ տանեացն՝ հաւասարաչափ բարձրութեամբ, և շրջանակաւոր դրուագադրժքարամբք, ՚ի մանրագոյն բոլորակ խորշս փորեալք:

Վաթուղիկէն լայնանիստ և բարձրաբերձ ՚ի բոլորշումեան իւրում, է անկիւնաւոր. և ընդ մէջ անկեանցն՝ ութն խորք ծոցացեալք մինչ ՚ի վերջին շրջանակն, յորմէ և ՚ի վեր՝ աւարտեալ է գմբէթն անխաչ:

Արևմտեան դուռն եկեղեցւոյն որ շարեալ է յաւուրց պարսկային իշխանութեան. և առ նորօք պատնէչ ամբարձեալ յարևելից ընդ հիւսիս, ամբարտակ բարձր որմոյն համակ ՚ի կոխածոյ քարանց՝ կայ կիսակործան կանգուն, և ՚ի հիւսիսոյ ցարևմտեան թևս եկեղեցւոյն հիմունք պատնիշացն ցվերին կամարս արևմտեայ դրանն կրաշաղախ կան մնան. նոյնպէս և մարդաչափ բարձրութեամբ պատնէչն ՚ի վերայ տանեաց՝ շրջապատ զկաթուղիկէին մնան կանգուն ցարդ և վնասեալ են շինուածոց եկեղեցւոյն ուրիք յանկիւնն:

Զորս յարձանագրութեանց անյիշատակ թողու է. Շահխաթունեան, մէք առնուեք ասուէն ՚ի նիւթ ստորագրութեան Եկեղեցւոյս:

Ի ճակատ արևմտեան դրանն ՚ի զուխ լուսամտին առանձին կամարաւ, ուր երևի անուն կառուցանողի տաճարիս՝ ՚ի մէջ եղծկոցն տառից. յորոց ՚ի միջավայրին փորեալ են խաչ ծաղկանկար, ըստ այսմ.

«Աստուծոյ Աջոյն
 Գրի գոր թողն Վասակայ շինեցաւ
 ապաւէնս
 փրկել զԳրիգոր»

Ի ճակատ հարաւային դրանն՝ ըստ այսմ «Յանս տեառն Թէոդորոսի Գնունեաց Եպիսկոպոսի շինեցաւ Աստուածածին տունս քաւել զԳրիգոր անարժանս»:

Ի բարձրութեան արևմտեան թև եկեղեցւոյն, ուր գրեալ է արձանագիրն. Գոհանամ զԱստուծոյ

՚ի ներքոյ սորին դնի արձանագիր ինչ հանդերձ թուականաւ. օրինակ զայս. Ամաց ամ տեառն ՅԹԿ. նաւակատիք սրբոյ Եկեղեցւոյս ՚ի յիշատակ Եպիսկոպոսիս:

Ի ներքոյ սորին՝ արտաքոյ յառաջ բերեղոցն ՚ի է. Շահխաթունեանց, դնի և այս արձանագիր մեծ, թողեալ ՚ի նմանէ:

«Ի ՆԾԹ. թուականութեան եւ ՚ի Հայրապետութեան տեառն Սարգսի Հայոց Վաթուղիկոսի շնորհիւն Աստուծոյ կամ եղև ինձ Գաղկա Շահինշահի որդոյ Աշոտոյ՝ թողուլ զՄաստարաի հակին զաւելորդն ԶՌ. և ածի եՌ. վասն կենաց անձին իմոյ, եւ որդոց իմոց, որ չկարէ որ աւելի քան զայս առնուլ յորդեաց իմոց կամ ՚ի թոռանց. եւ եթէ առնու որ արծաթն այն, եղիցի նմա որպէս զարծաթն յուզոյի մատնչի խեղդեալ ՚ի կորուստ, եւ յամենայն արժանաւոր սրբոց. եւ ՚ի սրբոյն Գրիգորէ նզովեալ եղիցի. եւ մեղաց պարտական առաջի Աստուծոյ»

Ի ներքոյ սորին գիրք Յանուսիս:

ՈՅՐ Լ Լ
 ՕՈՒՏԱԿ

ՏԵՂԱԳՐՈՒԹԻՒՆ ԵԿԵՂԵՑՒՌՅՆ ԱՏՆԵԱՄԱՆ ԳԵՂԶՆ:

Եկեղեցին Ատիեամանու անուանակոչութեամբ սրբոյն Գէորդայ, է ընդ գեղջն կառուցեալ ՚ի ծործորս արևմտեան բաղկաց լերին Արագածու, բոլորակ խաչաձև քան և հինգ քայլ երկայնութեամբ ՚ի ներքուստ սկսեալ ՚ի սեղանոյն ցրուռն արևմտեան. իսկ լայնութիւնն քան քայլ ՚ի հիւսիսային թևէ ցհարաւայինն. գեղեցիկ շինուած՝ յար և նման շինութեան Հոխիսիմեայ վանաց ՚ի Վաղարշապատ. և իւր ևս գերազանց քան զայն. զի ընդ մէջ բոլորակ թևոց խաչաձև եկեղեցւոյս, ի չորեսին կուտէ ևս են նեղսագոյն բրգաձև թևք իրրև ճաճանչ ՚ի թևս խաչի. ՚ի չորեսին յայտոսիկ բոլորակն՝ են դրունք չորից խորանաց որպէս և Հոխիսիմեայն, յարևելից և յարևմտից. ՚ի զուխըս այսոցիկ բրգաձև անկեանց եկեղեցւոյն, սե-

դանոյն և չորիցխորանացն՝ ՚ի շրջապատս գմբեթին ՚ի վերայ տաննացն, են մի մի բաւականաչափ պահարանք ընդարձակ ընդ ամենն տանն. յորս են գաղտնի ճանապարհք ընդ մէջ իրերաց և յորմունսն ՚ի վայր, յորս և մուտք և շրջեցաք:

Տաճարն ունի զչորեսին լուսամուտս, և առ յաւէտ բոլորակութեանն՝ է անսխւն. այլ ՚ի վերայ չորից կամարացն՝ հաստատուն կառուցեալ գմբեթն երկոտասան լուսամտօք. իսկ ծայր գմբեթին, ուստի սկսանի զուխն սրածայր, անկեալ է այժմ. զոր ներկայ բնակիչք գեղջն փայտածածկ արարին:

Յամենեսին ՚ի սոսա չգտաւ արձանաղիր և ոչ մի. բաց յանուանէս Գրիգոր, ՚ի ծակատ արեւմտեան դրանն, ՚ի դրուագս անդ կիսաբոլորակ կամարի լուսամտին, գրեալ յիւրաքանչիւր հատուածի՝ մի մի տառ ՚ի բարձրութեան անդ որմոյն:

Չունի տեղի աւազանի, որպէս և Եկեղեցին Մաստարայ և այլ այսր կողմանց Եկեղեցիք:

ԶԱՐԸՆՃԻ ԳԻՒՂ. ԵՒ ԱՌ ՆՈՎԱԻ ԵԿԵՂԵՑԻՆ
ՀՈՅԱԿԱՊ:

Զարընճի անուանեալ զիւղատեղի (նախնի անունն անյայտ) է ՚ի ծայրի սպառուածի արեւմտեան բազկաց Արագածու, ուր հովիտք դալարաւէտք տարածին ցափն Ախուրեան գետոյ մերձ ՚ի սահմանաղուխս ՌՈՒՍաց և դաշտին Մաստարայ, մօտ յԱնի քաղաք. որոյ է իրրե ամարանոց. զի յԱնուոյ և այսր յարեկոս իւր յայտնոյս գետոյն բարձրանայ դաշտավայրն յոտս մեծի այսր լերին, ուր է աւերակ գեղջ ամայի անջրգի, բայց սիլաւէտ և դալարավայր. որոյ ջուր ՚ի հնումն եկեալ է ՚ի Մաստարայ գեղջէ յառուակէն և այժմ՝ անուանեալ նախավկայի, որ երևի յայտնապէս ՚ի լանջս աղիսաղխեալ բլրոցն, որք մի ՚ի մի կցելով երկարեն և միանան յոտն Արագածու, որք որպէս այլուր ասացեալ ենք, բազուկք համարին լերինն:

Այս ճանապարհ ջրոյ յայն սակս անուանի նախավկայի զի ՚ի բլուրն ՚ի վեր յորոյ ՚ի լանջսն է առուն և ՚ի ներքոյ այնր զիւղն Մաստարայ, որոյ մատուռն անուամբ նախավկային Ստեփաննոսի հուաւորութեամբ ՚ի Զարընճեոյ իրրե երկուց ժամուց ճանապարհի:

Եկեղեցի գեղջս սրբատաշ քարամիք կառուցեալ է ՚ի հիւսիս նորա և է անսխւն. բոլորակ, խաչաձև, փոքրիկ և գմբեթարդ կանգնեալ ՚ի վերայ չորից կամարակապ բրդաձև թևոց. որոց կամարք ամբողջ ընդ կաթուղիկէիւ. այլ յարկք նոցա խոնարհեալ բաց ՚ի հիւսիսայնոյն. արտաքուստ միւսիոյն քանդակագործութեամբ և վեց լուսամտօք միայն մի մի յարեկեան և յարեմտեան թևսն, և զյոզ զյոզ ՚ի հարաւային և ՚ի հիւսիսայինսն. յաջակողմն սեղանոյն է մի խորան և մի այլ վերնայարկ ՚ի վերայ նորա. որոյ մուտք է ՚ի միջոյ ներքնոյ խորանոյն:

Եկեղեցին ունի զերկուս դրունս, զհարաւային փոքր և զարեւմտեանն մեծ. ՚ի չորեսին բրդաձև թևս նորա են չորք այլևս լուսամուտք, որք որպէս ասացաւ, զեկեղեցին խաչաձև կացուցանեն արտաքուստ, այլ խորանն աջակողման կորուսանէ ՚ի հիւսիսոյ արտաքուստ զխաչաձևութիւնն. զի երևի իրրե կցուրդ յորմն եկեղեցւոյն. գմբեթն արտաքուստ է ութանկունի ամբողջ տակաւին և ութն փոքրիկ սեամիք ՚ի շրջապատսն. որք են օձաձև ոլորածոյք և մանր փորուածովք միւսիոյն քարամիք. համակ շինութիւն տաճարին է ՚ի կարմիր յղկեալ քարանց. յորս գրեթէ յամենեսին գրեալ են առանձին առանձին տառքս մ. ս. գ. ու չգտաւ այլուր արձանաղիր յիշատակի. բայց թէ ՚ի հիւսիսային թևս եկեղեցւոյն այս ինչ մեծ մասամիք եղծեալ:

"Նս Թամար ծառայ Աստուծոյ, որ ագա . . . յաշաւթս յիշեցէք . . ."

ՄԱԶԱՐՁՈՒՂ ԳԻՒՂ

Մազարձուղ գիւղ ՚ի բարձրաւանդակ հովտի արեւմտեան լանջաց Արագած լերին. ՚ի բարձրութեան անդ ՚ի վերոյ քան զՄաստարայ. բնակիչք նորա են տունք ասանն հինգ ՚ի Բագրեանդայ ՚ի գեղջէից Վաղարշակաւանայ գաղթեալք անդ քսան երկու ամօք յառաջ, յորում նախ քան զայն չէին բնակութիւնք, այլ ամայի էր զիւղն:

Գոյ գեղջս ՚ի հնուց երկու եկեղեցի Ամենափրկիչ և սուրբ Յովհաննէս անուամբ, զորս երևի թէ նորոգ անուանակոչեալ են՝ Առաջին որ և մեծն է այժմ աւերակ արտաքոյ գեղջն յարեկից նորա,

յայտման գերեզմանոցին, որ և զոյրն, ասնն, 'ի
 Հնուց. և է սագաշէն կուպիտ քարամիք, կարի յե-
 տոյ կառուցեալ քան զփոքրիկ զմրէթաւոր՝ եկե-
 ղեցին. կիսաբոլորակ կամար խորանին կանգուն
 կայ հանդերձ հիւսիսային որմով. իսկ մնացեալ
 շինութիւնն խոնարհեալ այժմ. յորմն հիւսիսա-
 յին երեկն երկոքին որմասիւնք յորոց ձգեալ են
 կամարք 'ի հարաւեղոյս. ուր և մերձ յորմն արե-
 մտեան 'ի վերայ մնացորդ որմոյն երեւի որմասիւնն:

Մի դուռն ունի տաճարն յարեմոտից, 'ի շրջա-
 պատս նորա յաւերակնն անդ երեկն տեղէք սե-
 նեկաց. այլ ոչ գոյ արձան յիշատակի:

Եկեղեցին երկրորդ ընդ մէջ զեղջն գոլով 'ի հիւ-
 սիսոյ՝ է փոքրիկ խաչաձև և ամրէթաւոր. անխո-
 րան և անաւազան, ունի մի սեղան և մի դուռն
 յարեմոտից:

ՏԵՂԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՌՈՒՂԻԿԷ ԵԿԵՂԵՑԻՈՅ

ԱՐՈՒՃ ԱԻԱՆԻ:

Հոյակապ եկեղեցի Արուճ աւանի յԱրագածոտն
 շինեալ 'ի Գրիգորէ իշխանէ Մամիկոնեան, է կարի
 մեծ, երկայնութեամբ յառաջոյ սեղանոյն ցգուռն
 արեմտեան՝ քառասուն քայլ և լայնութեամբ՝
 քսան և վեց, չունի զսիւն յայսմիկ երկարութեան
 իւրում, այլ կաթուղիկէն կառուցեալ 'ի վերայ
 չորից որմասեանց, որք վերուստ 'ի վայր յառա-
 ջացեալք են յորմոյն ընդ մէջ Եկեղեցւոյն իրրև
 ըկոտասան ոտք. բաց 'ի չորից կամարացն, յորոց
 վերայ կաթուղիկէն, են և այլ երկու կամարք 'ի
 հիւսիսային որմունն եկեղեցւոյն ստոր քան զմի-
 ջինսն յառաջացեալ նովին լայնութեամբ ընդ մէջ
 եկեղեցւոյն. կամարքն են առ հասարակ երկկարգ,
 և 'ի ներքին խորսիսաց ցիսարիսին վերին՝ եզերքն
 են անկիւնաւորք և միջին վայրն է բոլորչի:

Ի յետին զասու յերկուց կողմանց են երեք
 կարգ և կամարաւոր լուսամուտք մեծք. իսկ 'ի ճա-
 կատս երից զրանցն՝ չորք, երկու մեծ 'ի խոնարհ
 յաջ և յահեակ կոյս զրանն, և երկու միակարգ
 և փոքունք 'ի զուսս զրանցն, երկու երկու յա-
 ուաջին զասու նոյնպէս յերկուց կողմանց և երեք
 մեծ յաւազ խորանն, որոյ վեմքարն ցարդ ան-
 կեալ առ տեղեան, վերնախորիսիք կամարացն
 են ոչ իրրև այլ եկեղեցեացն զրուազաւորք, այլ

հաւասար յորմն բարակ շրջանակօք որոշեալ, Կա-
 թուղիկէն խոնարհեալ է խապառ. վասնայսորիկ
 և ցիէս բարձրութեան զրանցն լցեալ է եկեղեցին
 քարամիք և կրովք աւերանաց. երկու ևս խորանք
 ի կողմանց սեղանոյն, առ հնութեանն չունի տա-
 ճարն 'ի ներքոյ՝ զգրուազաւոր քանդակագործու-
 թիւնս:

Հինդ զրունք են տաճարիս մեծի. որոց զաւա-
 ճեաւ ամբարձեալ են բրդունս ներկայ մահմետա-
 կան բնակիչք. և զմին 'ի հարաւոյ միայն լծողեալ,
 ընդ որ լցեալ 'ի ներքս մակաղնն զխաչինս 'ի ձմե-
 րան, յապահոյութիւն 'ի զազանաց:

Արձանագրութիւնք եկեղեցւոյս յառաջ բերեալ
 են 'ի Շահխաթունեանցէ քաղուածովք յիւրումն
 ստորագրութեան, զանց արարեալ զբազմօք ան-
 վերձանելի եղելովք 'ի մերում տեսութեան:

Այս Կաթուղիկէ Եկեղեցի Արուճ (Թայիշ
 աւանի կառուցեալ է 'ի Գրիգոր Իշխանէ Մամի-
 կոնեան յամի Տեառն 671. և է հնազոյն գրե-
 լթէ քան զայլ եկեղեցիս եղեալս յԱրագածոտն
 գաւառի:

ԱՐԷՒ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԻԹԱՐԵԱՆՏ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱՄՈՍ ԿՈՄԵՕՆԻՈՒՍ ԵՒ ՆՈՐԱ

ՏԻՏԱԳԳԵՂԱՒ ԲԱԿՆԱ

(Շարձանալովն)

Թ Ղ ԳԼ ԵՒ Ե

ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆՆԵՐՈՒՄ ՊԷՏՔԷ ՍՈՎՈՐԵՆ
 ԵՐԿՈՒ ՍԵՈՒ ՄԱՆՈՒԿՆԵՐԸ:

Ոչ միայն հարուստների և իշխանների, այլ և
 չքաւորների որդիքը, տղայքը և աղջկուկքը, քա-
 ղաքներում և դիւղերում, ամենքը պէտք է ու-
 սումնարան ուղարկուին:

Մարդիկ ծնուած են՝ որ մարդիկ լինին, այս-
 ինքն՝ որ բանաւոր արարած, Աստուծոյ նմանու-